# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

*/հայտերի գնահատման և հաստատման նիստի/*

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/14»* գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

03 հունիսի 2019թ
ժամը 12:00

***ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում***

Մասնակցում էին

| | | |
|---|---|---|
| նախագահ՝ | Արփինե Կարապետյան | */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/* |
| Հանձնաժողովի Անդամներ՝ | Մամեդ Սալոյան | */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/* |
| | Հովիկ Մելքոնյան | */Մարմաշենի համայնքի ղեկավարի խորհրդական/* |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Սաթենիկ Մաղաքյան | */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/* |

1. ***Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին***

1. *Ընդունել ի գիտություն, որ*

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանմ առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/14»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

*2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին*

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները:

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | «Առկտուր» ՍՊԸ | բավարար |
| 2 | «Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ | բավարար |

Մասնակիցը ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ *«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/14»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

1,2,4,5 չափաբաժինների մասով «Առկտուր» ՍՊԸ –ին,

6-րդ չափաբաժնի մասով՝ «Մարգարիտ Արծրունյան» Ա/Ձ-ին

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ-0*

*1. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում, և անգործության ժամկետ սահմանել պայմանգրի կնքման որոշման հրապարակելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

2. *Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

Հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ________________ Արփինե Կարապետյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
անդամ՝ ________________ Մամեդ Սալոյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Անդամ՝ ________________ Հովիկ Մելքոնյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Քարտուղար՝ ________________ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն